ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 հոկտեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

145
(2811)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԲԱԲԱՅԱՆԻՆ ԿԿԱՆՉԵՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանին օրերս կհրավիրեն ՀՀ քննչական կոմիտե՝հարցաքննության: Արդյոք իրավապահ համակարգը համարձակություն կունենա՞ հարց բարձրացնելու, թե ով էր Սամվել Բաբայանին մանդատ տվել ՀՀ կամ Արցախի իշխանության թիկունքում հակառակորդի հետ բանակցելու հարցում, որն, ըստ էության, պետական դավաճանության տարրեր է պարունակում: Բանն այն է, որ Արցախի նախկին ԱԽ Սամվել Բաբայանը Արցախից Հայաստան տեղափոխվելուց հետո շտապել էր Հանրային հեռուստաընկերություն եւ մի շարք աղմկահարույց հայտարարություններ արել, որոնք կամ վրիպել են հայրենի իրավապահների աչքից, կամ էլ պարզապես ցանկություն չունեն իշխանությունների սիրելի Սամվել Բաբայանի հայտարարությունների մասով քրգործ հարուցել: Այսպիսով, Հանրայինին տված իր հարցազրույցում Սամվել Բաբայանը հայտարարել էր, թե ինքը քողարկված բանակցություններ է վարել Ադրբեջանի հետ, ավելին՝ինչպես ինքը հայտարարեց, որոշ հարցերի շուրջ արդեն համաձայնության են եկել Ադրբեջանի հետ: «Մենք Ադրբեջանի հետ պայմանավորվել էինք ավտոնոմ ռեսպուբլիկայի շուրջ, կետ առ կետ գրած էր (23 կետ): Ադրբեջանը համաձայնել էր»,-ասել էր Բաբայանը: Նա նաեւ ասել էր, որ Արցախի 3 նախագահներն էլ պետք է կալանավորվեն, ու հենց այդպես էլ արեց Բաքուն: Հետաքրքիր է, որ այս ընթացքում Բաբայանը որեւէ պաշտոն չէր զբաղեցնում ո՛չ ՀՀ-ում, ո՛չ էլ Արցախում, ուստի որեւէ իրավասություն չուներ բանակցություններ վարելու, այն էլ՝թշնամի երկրի հետ: Ուստի հարց է առաջանում՝ո՞վ է Սամվել Բաբայանին մանդատ տվել, որ թշնամու հետ բանակցություններ վարի, իր հարցազրույցում էլ նա չէր բացահայտել դա: Հաշվի առնելով, որ Արցախում Սամվել Բաբայանը ոչ ընդունելի եւ անհասկանալի կերպար է, դժվար թե ԱՀ իշխանությունները նրան այդ կարեւոր հարցը վստահեին, մյուս կողմից էլ՝եթե հաշվի առնենք Նիկոլ Փաշինյանի հետ նրա մտերմությունը, թերեւս բացառվում է, որ առանց նրա գիտության Սամվել Բաբայանը բանակցություններ վարեր: Հիշեցնենք, որ երեկ ՀՀ գլխավոր դատախազությունը հայտնեց, որ, Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանի հնչեցրած հայտարարությունների ու հաղորդման հիման վրա, քրեական գործ է հարուցել: Վարույթը նախաձեռնվել է երկու հոդվածներով՝Քրեական օրենսգրքի 550 հոդվածով («Զինվորական պաշտոնեական անփութությունը», որը սահմանում է՝ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում հրամանատարի կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը), ինչպես նաեւ Քրեական օրենսգրքի 550 հոդվածով («Մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը», որը սահմանում է՝առանց մարտի հանգամանքներով հարկադրված լինելու հրամանատարի (պետի) կողմից ամրությունը, մարտական տեխնիկան կամ մարտ վարելու այլ միջոցը հակառակորդին հանձնելը կամ թողնելը): Կարճ ասած, հող են նախապատրաստում քաղաքական իշխանությունները, որ Բաքվի բանտից եթե Արցախի 3 նախագահները Հայաստան գան, Հայաստանում անմիջապես կալանավորվեն:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Արցախի հերոս, անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Վիտալի Բալասանյանին Հայաստանի Ազգային անվտանգության ծառայությունում հարցաքննել են ապօրինի զենքի ձեռք բերման գործի շրջանակներում: Բալասանյանը ԱԱԾ-ում ցուցմունք է տվել եւ այնպիսի բաներ է հայտնել, որ, ըստ էության, նախաքննական մարմինը այս գործով անցնող անձանց դեմ որեւէ բան չի գտել: Նկատենք, որ այս քրեական գործը հարուցվել է մոտ 4-5 ամիս առաջ, որով անցնում է նախկին հայտնի պաշտոնյա, ում անունը կհրապարակենք առաջիկայում: Տեղեկացնենք, որ Վիտալի Բալասանյանի եւ նրա որդու դեմ հարուցված քրեական գործն արդեն կարճվել է: Արցախի դատախազությունը հայտնել էր, որ Ասկերան քաղաքի բնակիչ Ա. Բ.-ին նպատակային փոխառության պայմանագրով տրամադրվել է 74 միլիոն 500 հազար դրամ փոխառություն մեղվաբուծական նիքներ ձեռք բերելու նպատակով, սակայն տրամադրված գումարը օգտագործվել է ոչ նպատակային: Բալասանյանների պաշտպանը պնդել է, որ, 74 միլիոնի փոխարեն, ավելի քան 300 միլիոնի ծրագիր է իրականացրել Բալասանյանի որդին: Արցախի տարածքում այդ գումարով նոր մեղվաբուծական նիքներ են ձեւավորվել, վարկը ոչ նպատակային օգտագործելու կասկածանքը անհիմն էր համարել:



ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ԱԺ ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովին հոկտեմբերի 11-13-ը գործուղել է Բեռլին՝Դրեզդեն: Բեռլին գործուղվել են Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Պապոյանը, ԱԺ պատգամավորներ Արուսյակ Մանավազյանը, Նարեկ Գրիգորյանը, ԱԺ բյուջետային գրասենյակի փորձագետ Հայկազ Նասիրբաբյանը (հոկտեմբերի 10-14-ը), ինչպես նաեւ պատվիրակության քարտուղար, ԱԺ աշխատակազմի արտաքին կապերի վարչության միջխորհրդարանական կապերի եւ եվրահնտեգրման բաժնի առաջատար մասնագետ Ժաննա Հարությունյանը: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ գործուղված պատգամավորների շարքում ընդդիմադիր պատգամավորներ չկան: Այսինքն՝ՀՀ ԱԺ-ն դարձել է իշխող ՔՊ-ականների համար զբոսանքի, աշխարհ տեսնելու հնարավորություն: Պատգամավորներ կան, որ իրենց կյանքում առաջին անգամ ինքնաթիռ են նստել, երբ պատգամավոր են դարձել: Օրինակ՝Բեռլին մեկնած նորատուսցի Նարեկ Գրիգորյանը, որն Ազգային ժողովի ամբիոնից մեկ նախադասություն անգամ չի կարողանում ճիշտ կազմել մայրենի լեզվով, անհասկանալի է, թե ինչով է զբաղված Գերմանիայի Դաշնությունում: Հիշեցնենք, որ նույն Նարեկ Գրիգորյանի մասին է խոսքը, որն ԱԺ ամբիոնից հայտարարել էր, թե մասնակցել է 44-օրյա պատերազմին, եղել է «Գեղարքունիք» ջոկատի հրամանատարը: Այդ տեղեկությունը, սակայն, հերքել է ՀՀ պաշտպանության նախարարությունը՝հայտնելով, որ Նարեկ Գրիգորյանի գլխավորած «Գեղարքունիք» ջոկատն առաջնագծում չի մարտնչել, առանձին որեւէ մարտական առաջադրանք չի կատարել, ջոկատի անձնակազմից զոհեր եւ վիրավորներ չեն եղել: Նկատենք, որ ՔՊ-ականները ուրախ ճամփորդում են մի իրավիճակում, երբ կորցրել ենք մեր հայրենի Արցախի Հանրապետությունը, հազարավոր արցախցիներ ունեն աջակցության կարիք, եւ անհրաժեշտություն կա միջազգային հանդիպումների միջոցով ստեղծել արտաքին հարաբերություններ, որոնք կկարողանան հետագայում մեզ օգնել: Այս օրակարգը սպասարկելու փոխարեն՝Նարեկ Գրիգորյանը, Արուսյակ Մանավազյանն ու իրենց հանձնաժողովի նախագահը, առանց խորհրդարանական ընդդիմադիրների, շրջագայություններ են կազմակերպել: Ավելին՝Նարեկ Գրիգորյանն իր նորատուսցի հետեւորդներին ակտիվորեն ցույց է տալիս Գերմանիայի մաքրամաքուր քաղաքներից կադրեր: Հիշեցնենք նաեւ, որ Նարեկ Գրիգորյանը ՔՊ-ական այն պատգամավորն է, որն ուշացել էր Հռոմի ստատուտը վավերացնելու մասին քվեարկությունից եւ երկար ժամանակ արդարանում էր դահլիճում խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի մոտ:

Երեկ տեղի ունեցավ Երեւանի նորընտիր քաղաքապետ Տիգրան Ավինյանի երդմնակալության արարողությունը, որի ավարտից հետո վերջինս պատասխանեց լրագրողների հարցերին: Կադրերի ընտրության մասին հարցերից մեկին ի պատասխան՝նորընծա քաղաքապետը հեգնեց. «Ինչքան հարազատ «պռարաբ» ու մեբելի դիզայներ կար, վարչության պետ էր էստեղ»: Աշղեկի մասին ակնարկելով՝ Ավինյանը, ամենայն հավանականությամբ, նկատի ուներ Հայկ Մարությանի ժամանակ շինարարության ու բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանին, ում մասին տեղեկություններ էին տարածվել, որ հայտնվել է այդ պաշտոնին՝շնորհիվ այն բանի, որ ժամանակին զբաղվել է Կարգին Հայկոյի՝Հյուսիսային պողոտայի տան վերանորոգման աշխատանքներով, ու դա բավարար էր, որպեսզի այդ մարդը նշանակվեր նման պատասխանատու աշխատանքի: Ի դեպ, ուժային կառույցների մեր աղբյուրները հայտնում են, որ մի քանի օր է, ինչ քաղաքապետարանի համապատասխան փաստաթղթեր են ուսումնասիրվում, եւ արդեն իսկ կան բավական հետաքրքիր տվյալներ, որոնք խոսում են Մարությանի իշխանության տարիներին շինարարական տենդերների կազմակերպման ու անցկացման խախտումների, խոշոր գումարների ծախսման հետ կապված խնդիրների մասին: Օրինակ՝առանց նախագծման, վերանորոգել են Կորեայի ձորի կամուրջը, առանց նախագծման աշխատանքների, երեք տարի ճանապարհների նորոգում են անցկացրել՝ընդհանուր շուրջ 12 մլրդ դրամ արժողության: Ուժային կառույցների մեր աղբյուրները հայտնում են, որ Մարությանի օրոք՝2021թ.-ին, Մալաթիա-Սեբաստիա համայնքի՝Մեծ Հայրենական պատերազմի հաղթանակի 40-ամյակին նվիրված հուշարձանի շինարարության մրցույթ են հայտարարել՝չունենալով հիդրոտեխնիկական նախագիծ: Ըստ նախնական ուսումնասիրությունների՝Մարությանի «պռարաբի»՝վարչության պետ եղած ժամանակ «անհասկանալի» պատճառներով ճանապարհաշինական մրցույթներ են շահել հիմնականում նույն մարդիկ, յուրաքանչյուրը՝3-4 լոտ: Թե մինչեւ ուր կհասնեն ուժային կառույցները Երեւանի նախկին քաղաքապետի կառավարման տարիներին տեղի ունեցած միլիարդների բյուջետային շարժի գործով, ցույց կտա ժամանակը: Մենք շարունակելու ենք տեղեկությունների ուսումնասիրությունը եւ դրանք մեր ընթերցողին ներկայացնելը:

ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՈ՞Ւ ԸՆԿԱՎ ԱՐՑԱԽԸ

«Ժողովուրդ» օրաթերթը «Երկիր ծիրանի» կուսակցության ղեկավար, ավագանու անդամ Զարուհի Փոստանջյանի հետ զրուցել է Արցախի լուծարման, հայաթափման եւ սպասվող զարգացումների մասին:

-Տիկին Փոստանջյան, սկսենք Արցախում տեղի ունեցած ցավալի իրադարձություններից. Արցախն արդեն ամբողջությամբ հայաթափված է, կա ստորագրված փաստաթուղթ, ըստ որի՝ հունվարի 1-ից պաշտոնապես Արցախի Հանրապետությունը կլուծարվի: Նախ՝ ինչո՞ւ այս իրավիճակին հասանք, ի վերջո, ո՞վ հանձնեց Արցախը՝ ընդդիմությո՞ւնը, թե՞ իշխանությունը:

-Եկեք հստակ որոշում կայացնենք, որ Արցախը հանձնել է Հայաստանի Հանրապետությունում գործող վերջին հինգ տարիների իշխանությունը, որովհետեւ Արցախն առանց Հայաստանի Հանրապետության երաշխավորության չէր կարող ինքնուրույն իրականացնել եւ՛ իր պաշտպանությունը, եւ՛ անվտանգությունը, եւ՛ ընդհանուր առմամբ իր քաղաքական կյանքը, որովհետեւ Արցախի միակ թիկունքը Հայաստանն էր, եւ արտաքին աշխարհի հետ շփումը տեղի էր ունենում Հայաստանի Հանրապետության տարածքում, միջոցով եւ հնարավորություններով: Սա միանշանակ է, երկրորդ կարծիք լինել չի կարող: Փաստաթղթերով ամրագրված է, եւ, բացի դա, ըստ էության, որպես դաշնային պետություն գոյություն ուներ, այսինքն՝ մենք մի անվտանգային գոտի էինք: Այս գործող իշխանությունը ինքն է զորակոչ իրականացրել՝ երեք անգամ զորակոչելով ՀՀ քաղաքացիներին Արցախի զինված ուժերում ծառայելու, եւ մենք մեկ դրամական միավորի տարածքում ենք, եւ մեր փոխարժույթը նույնն էր, եւ մենք մեկ անձնագրային միավորի մեջ էինք, այսինքն՝ Արցախի Հանրապետության քաղաքացիները նաեւ ՀՀ քաղաքացիներ էին: Հետեւաբար, ՀՀ զինանշանի ներքո պաշտպանություն պետք է տեղի ունենար Արցախի քաղաքացիների վերաբերյալ: Այս իշխանությունն է հանձնել՝ անկախ նրանից, թե ով է եղել իշխանության ղեկին Արցախում, թե ով է ստորագրել լուծարման թղթերը բռնության եւ սպառնալիքի ազդեցության տակ: Ի դեպ, դրանք փաստաթղթեր են, որոնք առ ոչինչ են, այսինքն՝ ըստ էության ոչ թե այդ փաստաթղթի ստորագրմամբ է դադարել գործել այս պահին Արցախի Հանրապետությունը, այլ այն պատճառով, որ Արցախից բռնի ուժով, ցեղասպանմամբ վտարվել են Արցախի քաղաքացիները, որոնք նաեւ ՀՀ քաղաքացիներ էին հանդիսանում: Հետեւաբար մեղքը եւ պատասխանատվությունը գործող իշխանության վրա է:

-Տիկին Փոստանջյան, Հայաստանի իշխանություններն էլ ասում են, որ եթե Արցախում վերջին իշխանափոխությունը տեղի ունեցած չլիներ, Ադրբեջանը ռազմական ագրեսիա չէր կիրառի: Ադրբեջանը իբրեւ թե հայտնել է Արցախի իշխանություններին, որ եթե իշխանափոխություն անեն, իրենք կդիմեն կտրուկ քայլերի, բայց իրենք ականջալուր չեն եղել, եւ այդ ընտրությունները տեղի են ունեցել: Եթե իշխանափոխություն չլիներ, հնարավոր կլինե՞ր խուսափել այս ամենից:

- Միանշանակ այս ամենը մանիպուլյացիա է: Ակնհայտ է, որ կեղծիքի միջոցով ցանկանում են փրկել հենց իրենց, քանի որ իրենք հենց այդ առաքելությամբ էլ եկել են:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԳՐՈՒՄ Է

Թ. ԹՈՎՄԱՍՅԱՆԸ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Աժ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի՝ աղօրինաբար լիազորությունները դադարեցված նախագահ, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «ՀՀ Ազգային ժողովում հյուրընկալեցի Հայաստանում Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Ջոն Գալագերին:

Հանդիպմանը քննարկեցինք հայ ժողովրդի համար ծանրագույն այս ժամանակահատվածում առաջացած մարտահրավերները, արցախահայության բազմաթիվ խնդիրները եւ դրանց լուծման հնարավոր ուղիները:

Ընդգծեցի, որ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման միջազգային ճանաչումն օրհասական է, որի համար իրականացվող իմ ամենօրյա ջանքերին խնդրեցի դեսպանի աջակցությունը:

«Արցախի Հանրապետության նախագահը երկրի լուծարման մասին փաստաթուղթը ստորագրել է ճնշման տակ, իսկ մենք գիտենք, որ ճնշման, ահաբեկման ներքո ստորագրված փաստաթուղթն իրավազորություն չունի: Մենք մի օր վերադառնալու ենք մեր հայրենիք»,- նշեցի իմ խոսքում:

Պարոն Գալագերին հայտնեցի, որ Արցախի Հանրապետությունը, անկախ արցախահայության բնակության վայրից, դե ֆակտո եւ դե յուրե գոյություն ունի, իսկ արցախահայության իրավունքներն ու խնդիրները չեն սահմանափակվում միայն հումանիտար բաղադրիչով:

Այս համատեքստում նշեցի, որ Արցախի Հանրապետության վտարանդի կառավարությունը, վտարանդի Ազգային ժողովը եւ պետականության մյուս բոլոր ատրիբուտները պետք է պահպանվեն եւ շարունակեն իրենց աշխատանքը ճգնաժամային ռեժիմում:

Արցախի խորհրդարանը պետք է հրատապ նիստեր հրավիրի, Կառավարությունը շարունակի աշխատանքը, քանի որ քաղաքացիների խնդիրների լուծման աշխատանքն ամենօրյա ռեժիմ է ու Արցախի Հանրապետության կառավարության եւ խորհրդարանի ուղիղ գործառույթը. կապ չունի, թե հիմա որտեղ են բնակվում արցախցիները:

Պարոն Գալագերն ընդգծեց, որ Միացյալ Թագավորությունը մշտապես պատրաստ է կանգնելու հայ ժողովրդի հումանիտար խնդիրների լուծման կողքին: Ավելին՝ մեծաքանակ հումանիտար օգնություն՝ ֆինանսական, բժշկական եւ այլ դրսեւորումներով, արդեն արվել է ու դեռ կարվի»:

Ո՞Վ Է ԱՐՑԱԽԻ ՊԱՐԵՏԸ

Ադրբեջանի նախագահը ոստիկանության գեներալ-մայոր Սարդար Սաֆարովին նշանակել է Ստեփանակերտ քաղաքի պարետ. այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները:

Ավելի վաղ լրագրող Թաթուլ Հակոբյանը տեղեկություն էր տարածել, թե Ստեփանակերտի պարետ է նշանակվել հայազգի Սարգիս Գալստյանը:

Հակոբյանը նաեւ հավելել էր, որ Սարգիս Գալստյանն Արցախի Ազգային ժողովի «Արդարություն» խմբակցության պատգամավոր Դավիթ Գալստյանի հարազատ հորեղբայրն է եւ Բակո Սահակյանի հետ ունի քավորսանիկական կապեր, ավելին՝ նա կասկածներ էր նաեւ հայտնել, թե Արցախում տարիներ շարունակ տարբեր պաշտոններ զբաղեցրած Գալստյանը «դեռ 90-ականներին է հավաքագրվել Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից»:

Այսպիսով, ստացվում է, որ Թաթուլ Հակոբյանը կեղծ տեղեկություններ է տարածում կա՛մ միտումնավոր, կա՛մ էլ առանց տեղեկությունը ճշտելու:

Ի դեպ, Թաթուլ Հակոբյանի այս գրառումից հետո սոցցանցերում մեղադրանքների հոսք սկսեց Սարգիս Գալստյանի հասցեին, թե վերջինս դավաճան է:

ՀՐԱՀԱՆԳԵԼ ԵՆ ԱՅՐԵԼ ՔԻՆԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ

Ադրբեջանը սեպտեմբերի 19-ից Արցախի դեմ լայնածավալ հարձակում էր սկսել՝ թիրախավորելով նաեւ քաղաքացիական ենթակառուցվածքներ, խաղաղ բնակիչների: Ջոհվել եւ վիրավորվել էին նաեւ քաղաքացիական անձինք: Սեպտեմբերի 20-ին ԼՂ իշխանություններն ընդունեցին ռուսական խաղաղապահ առաքելություն իրականացնող զորակազմի հրամանատարության առաջարկությունը՝ կրակի դադարեցման վերաբերյալ, որից հետո Արցախից ՀՀ տեղափոխվեցին բռնի տեղահանված քաղաքացիներ: Տեղափոխումը տեղի է ունեցել ճնշումների ազդեցության տակ: Քիչ չեն համացանցում հայտնված այն հոլովակները, որոնք ապացուցում են, որ Ադրբեջանի իշխանությունները զենքի սպառնալիքով ստիպում էին արցախահայությանը անել այս կամ այն գործողությունը:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկություններով՝ Արցախի իշխանությունները հրահանգել են՝սահմանն անցնելուց առաջ բոլոր նրանք, որոնք ծառայել են Պաշտպանության բանակում, այրեն զինվորական գրքույկները հնարավոր տհաճություններից խուսափելու համար: Մասնավորապես, նրանց ասվել է, որ եթե Հակարիի կամրջի մոտ տեսնեն զինվորականի, կգերեվարեն, ու ստիպված Արցախի նախկին եւ ներկա զինծառայողները մասսայաբար վառել են իրենց զինվորական գրքույկները: Այս տեղեկությունը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատել են բազմաթիվ արցախահայեր, ուղղակի անվտանգությունից ելնելով՝ անունները չենք հրապարակում:

ՎԱՏ ԲԱՆ Է ՀՈՒՇՈՒՄ

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի ելույթը օկուպացված Ստեփանակերտում Հայաստանի համար լավ բան չի խոստանում. նման կարծիք է հայտնել Կարնեգի եվրոպական կենտրոնի փորձագետ Թոմաս Դե Վաալն իր X միկրոբլոգում՝ վերլուծելով Ալիեւի հայտարարությունը:

Նրա կարծիքով՝ «դա զայրացած ելույթ է, որը խոսում է անցյալի դժգոհությունների մասին եւ ոչինչ չի ասում ապագայի կամ հաշտության մասին»:

«Ոչ մի ձիթենու ճյուղ չկա: Խորեոգրաֆիան դա է ընդգծում: Ալիեւը՝ կամուֆլյաժ համազգեստով, Ստեփանակերտի/Խանքենդիի դատարկ հրապարակում: Ավելի ուշ Ալիեւին նկարահանել են լքված փողոցներով եւ գրասենյակներով միայնակ քայլելիս: «#Ղարաբաղն առանց հայերի»-ի շատ նման ուղերձ՝ ադրբեջաներենով «ադրբեջանական ժողովրդին»:

Փորձագետն ուշադրություն է հրավիրում Ալիեւի այն խոսքերի վրա, որ «Ադրբեջանի բոլոր բնակիչները փառաբանում են Ալլահին»: «Այս «մենք»-ն այստեղ չի ներառում 3 շաբաթ առաջ փախած հայերին, եւ նրանց վերադառնալու կոչ չկա:

Սա շատ անձնական է հնչում, եւ ասես Ալիեւը դեռ ուզում է հաշվեհարդար տեսնել, իր կարծիքով, 17 տարվա նվաստացման համար, երբ հայերը գերիշխող դիրքում էին: Դրա համար նա ծաղրում է Ղարաբաղի հայ առաջնորդներին՝ ասելով, որ նրանք «թեյ են խմում» Ադրբեջանի բանտերում՝ «սպասելով արդարադատության»:

Դա նաեւ անձնական էր այն առումով, որ ելույթը համընկավ 2003 թվականին նախագահի պաշտոնում նրա առաջին երդմնակալության 20-ամյակի հետ: Միգուցե նույնիսկ սեպտեմբերյան ռազմական օպերացիան այս ամսաթվի հետ համընկավ:

Սա լավ բան չի հուշում Հայաստանի համար: Այստեղ ոչ մի նշան չկա այն բանի, ինչի կոչ են անում արեւմտյան երկրները՝ Ալիեւը պետք է սկսի Հայաստանին եւ Փաշինյանին վերաբերվել որպես գործընկերոջ, ոչ թե պարտված թշնամու:

Փոխարենը դա հուշում է, որ Ալիեւը դեռ հավատում է, որ լեգիտիմություն է ձեռք բերում հանրությունից՝ մոբիլիզացնելով հակահայկական տրամադրությունները: Եվ սրանք ուժեղ նշաններ են, որ նա շարունակելու է սպառնալ հենց Հայաստանին»:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

Ի՞ՆՉԸ ՆՊԱՍՏԵՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿԻՆ

«Բազմաթիվ գործոններ նպաստեցին Ադրբեջանի վերջնական հաղթանակին Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի շուրջ երկարատեւ հակամարտությունում: Որոշ գործոններ արմատավորված են Հարավային Կովկասի բարդ պատմության մեջ: Մյուսները վերաբերում են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ չափերի, բնակչության եւ ռեսուրսների անհամամասնությանը: Ի տարբերություն Հայաստանի, որը քիչ բնական ռեսուրսներ ունի, Ադրբեջանը էներգետիկ ռեսուրսներով հարուստ երկիր է եւ, հետեւաբար, ի վիճակի է մեծ գումարներ ծախսել զենքի վրա»,- «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ասվում է Ամերիկյան Quincy Institute for Responsible Management ամսագրի Responsible Statecraft-ի հոդվածում:

«Լրացուցիչ գործոնները ներառում են Հայաստանի մշտական ներքաղաքական տարաձայնությունները երկրի արտաքին քաղաքական կողմնորոշման շուրջ, ինչպես նաեւ Հայաստանի եւ Ղարաբաղի քաղաքական վերնախավերի միջեւ մրցակցություններն ու տարաձայնությունները:

Խորհրդային Միության փլուզումից հետո՝ անկախություն ձեռք բերելուց հետո, Հայաստանը մեծապես կախված է եղել Ռուսաստանի աջակցությունից, սակայն հիմնականում Ուկրաինայի պատերազմի պատճառով Մոսկվայի առաջնահերթությունները փոխվել են: Եվ Թուրքիան, եւ՝ Ադրբեջանը ավելի կարեւոր են դարձել Մոսկվայի համար, եւ ՌԴ-ի կողմից Հայաստանին համարժեք աջակցություն չցուցաբերելը, մասնավորապես՝ օգտագործելով իր խաղաղապահ ուժերը շրջափակումը դադարեցնելու համար, կանխորոշեց հակամարտության արդյունքն անցյալ ամիս:

Ի դժբախտություն Հայաստանի՝ Ադրբեջանը նույնպես ավելի կարեւոր է դարձել Արեւմուտքի համար Ուկրաինայի պատերազմի լույսի ներքո: Սա նշանակում էր, որ ո՛չ Եվրոպան, ո՛չ ԱՄՆ-ն պատրաստ չէին լուրջ ռիսկի դիմել Բաքվին զսպելու համար:

Վերջապես, Հայաստանի վերջնական պարտությանը նպաստեցին միջազգային եւ տարածաշրջանային աշխարհաքաղաքական մրցակցությունները եւ Հայաստանի խոցելի աշխարհաքաղաքական դիրքը: Այդ գործոններից էին Եվրասիայի վերահսկողության համար ռուս-արեւմտյան ավելի լայն մրցակցությունը եւ Իրանին զսպելու եւ մեկուսացնելու Վաշինգտոնի 30-ամյա ջանքերը, որոնք մերժեցին Թեհրանին որեւէ դերակատարություն Հարավային Կովկասում սառը պատերազմից հետո ձեւավորվող տնտեսական եւ անվտանգության կառույցներում, եւ որ ամենակարեւորն է՝ Ադրբեջանից, Կասպից ծովից եւ Կենտրոնական Ասիայից նավթն ու գազը դեպի արեւմտյան շուկաներ տեղափոխելու խողովակաշարերի կառուցման մեջ:

Այս նպատակին հասնելու համար Միացյալ Նահանգները եւ Եվրոպան փաստացիորեն Թուրքիային տվել են առաջատար դեր Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում՝ եւ՝ որպես Կենտրոնական Ասիայի պետությունների օրինակելի մոդել, եւ՝ որպես Արեւմուտքի հիմնական տարածաշրջանային գործընկեր: Թերեւս Հայաստանը պետք է այն ժամանակ տեսներ ազդանշանը եւ ավելի մոտենար Արեւմուտքին՝ ձգտելով համաձայնության գալ Թուրքիայի հետ, բայց հաշվի առնելով Օսմանյան կայսրության եւ Թուրքիայի հետ հայերի պատմությունը, դա հեշտ չէր անել, եւ Երեւանը փոխարենը որոշեց ավելի սերտ համագործակցել Ռուսաստանի հետ:

Փաստորեն, Հայաստանը կապեր է պահպանել Արեւմուտքի հետ եւ նույնիսկ միացել է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին: Այնուամենայնիվ, չնայած Արեւմուտքի հետ կրոնական եւ մշակութային կապերին եւ քաղաքականապես ակտիվ սփյուռքին, հատկապես՝ Ֆրանսիայում եւ Միացյալ Նահանգներում, Երեւանի ավելի սերտ կապերը Մոսկվայի հետ հանգեցրել են Արեւմուտքի հանդեպ շարունակական անվստահության: Եվ ժամանակի ընթացքում Ադրբեջանի էներգետիկ ռեսուրսների գայթակղությունը չափազանց ուժեղ դարձավ, որպեսզի Արեւմուտքը դիմադրի»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆՈՐ ՆՇԱՆԱԳՈՒՄ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամանով՝ Տիգրան Առաքելյանը նշանակվել է Քրեական օրենսդրության, քրեակատարողական եւ պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության պետ:

Նա այդ պաշտոնին նշանակվել է 12 ամիս փորձաշրջանով:

ԿԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միյատովիչը հոկտեմբերի 16-23-ը կայցելի Հայաստան եւ Ադրբեջան, նաեւ Լեռնային Ղարաբաղ՝ կենտրոնանալով հակամարտությունից տուժած մարդկանց իրավունքների իրավիճակի վրա:

Այս մասին հայտնում են ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակից:

Հանձնակատարը հանդիպումներ կունենա պետական պաշտոնյաների, միջազգային կազմակերպությունների եւ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Այցի ավարտին կհրապարակվի հայտարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻՑ՝ ՍԼՈՎԵՆԻԱՅԻՆ

ՀՀ կառավարությունը ֆինանսական օգնություն կտրամադրի Սլովենիային:

Գործադիրը հաստատել է 50 հազար եվրո օգնությունը:

Այս մասին տեղեկանում ենք ԱԳՆ մամուլի խոսնակ Անի Բադալյանի «X»-ի միկրոբլոգից: Նախատեսվող օգնությունը տրամադրվում է նորագույն պատմության ամենամեծ բնական աղետի հետեւանքների դեմ պայքարի համար:

Հիշեցնենք, որ օգոստոսի 3-ին եւ 4-ին հորդառատ անձրեւների պատճառով Սլովենիան բախվել է իր նորագույն պատմության ամենամեծ բնական աղետին: Հայտնի է, որ կան զոհեր, ավերվել են ճանապարհներ, կամուրջներ, շինություններ:

ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հաքան Ֆիդանը երեկ հեռախոսազրույց է ունեցել ՌԴ արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի հետ:

Այս մասին տեղեկություն է տարածել Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը: Զրույցի ընթացքում քննարկվել են Իսրայելի եւ Պաղեստինի իրադարձությունները, ինչպես նաեւ Իսրայելի հարձակումները Գազայի հատվածի վրա:

Կողմերը մտահոգություն են հայտնել՝ խոսելով այն մասին, որ ստեղծված իրավիճակին պետք է այնպիսի լուծում տրվի, որպեսզի խաղաղ բնակիչներ այլեւս չտուժեն:

ԻՆՉՈՒ

ԲԵՐՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԲՐՅՈՒՍՈՎԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն՝ պարեկները բերման են ենթարկել Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի պաշտոնյաների, մասնավորապես՝ պարեկները բերման են ենթարկել Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի պրոռեկտորին ու փիլիսոփայության եւ պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատարին: Նրանք կասկածվում են թմրանյութի օգտագործման մեջ, իսկ թե ինչ կդարձի ֆնությունը, կհետեւենք զագացումներին:

Shamshyan.com-ը գրել էր, որ հոկտեմբերի 16-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի 1-ին վաշտի պարեկները ծառայության ընթացքում հերթական անգամ հայտաբերել են կասկածելի 2 քաղաքացու, որոնք Մինսկի փողոցում տարօրինակ վարքագիծ են դրսեւորել: Պարեկները մոտեցել են այդ քաղաքացիներին, եւ նկատել են, որ նրանցից մեկը գրպանից իրեր է դուրս հանել ու նետել:

Տեղում պարեկները վնասազերծել են նրանց, եւ պարզվել է, որ նետել է 3 փաթեթ եւ 2 գլանակ:

Նշված անձինք թմրանյութ պահելու եւ օգտագործելու հիմնավոր կասկածի առկայության հիմքով պարեկների կողմից ձերբակալվել եւ տեղափոխվել են ոստիկանության Նոր Նորքի բաժին:

Ահազանգով ժամանել է Հայաստանի քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի խումբը, եւ պարզել են, որ դեն նետված գլանակներում եւ փաթեթներում եղել են թմրանյութի նմանվող զանգվածներ, գլանակներից մեկում էլ եղել են կիսամոխրացած հետքեր:

Դեպքի փաստով Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, նշված անձինք ոստիկանության Նոր Նորքի բաժնից ներկայացվել են Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին:

Shamshyan.com-ի տեղեկություններով՝ բերման ենթարկվածները 38 եւ 37-ամյա տղամարդիկ են, որոնցից մեկը հայաստանյան հայտնի ու ճանաչված բուհերից մեկի պրոռեկտոր է, մյուսն էլ՝ փիլիսոփայության եւ պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ

ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ թալանել են Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանի եղբոր առանձնատունը: Ավելին՝ «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝դատարանի նախագահն անձամբ է զանգահարել եւ հանցագործության մասին հաղորդում ներկայացրել իրավապահներին: Ենթադրյալ հանցագործները տարել են մոտ 230 հազար դոլարի ոսկի ու «Ռոլեքս Ավի» տեսակի թանկարժեք ժամեր:

Ի դեպ, ըստ լուրերի՝ տանը խոշոր չափի գումար է եղել, որը, ըստ էության, գողերը չեն հայտնաբերել:

Նկատենք, որ ենթադրյալ հանցագործները տեղեկացված են եղել, որ տանը մարդ չկա, ու մտել են տուն:

Նշենք, որ shamshyan.com-ը գրել էր, որ հոկտեմբերի 15-ին առանձնապես խոշոր չափի գողության դեպք է տեղի ունեցել Կոտայքի մարզում:

Ժամը 20:30-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կոտայքի բաժին ահազանգ է ստացվել, որ Առինջ գյուղի Միհեր Մկրտչյան 1-ին փողոցի տներից մեկից գողություն է կատարվել:

Տեղում ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ անհայտ անձը կամ անձինք ժամը 13:30-ից 20:30-ն ընկած ժամանակահատվածում նշված փողոցի թիվ 2-րդ տան խոհանոցի պատուհանը բացել են, մտել տուն, տակնուվրա արել այն եւ հափշտակել խոշոր չափի գումար, ոսկյա զարդեր եւ դիմել փախուստի:

Տեղում աշխատել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության փորձաքրեագետները:

Դեպքի փաստով Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ նշված տունը պատկանում է հայաստանյան հայտնի դատավորներից մեկի եղբորը՝ 42-ամյա Դավիթ Հակոբյանին, որը «Նազարյանշին» ՍՊԸ տնօրենն է. նրա տանից հափշտակել են մոտ 50 հազար ԱՄՆ դոլար, մոտ 150 հազար ԱՄՆ դոլարի ոսկյա զարդեր, ինչպես նաեւ 4 հատ ձեռքի բրենդային, թանկարժեք ժամացույցներ:

ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ինքնասպանության փորձ է գրանցվել Սպիտակ քաղաքում:

2005 թվականին ծնված աղջիկը տանը խմել է մեծ քանակությամբ դեղ՝ փորձելով վերջ տալ իր կյանքին: Մտերիմները նկատել են, որ նրա ինքնազգացողությունը գնալով վատանում է, շտապ տեղափոխել են հիվանդանոց:

Բժիշկներին հաջողվել է փրկել աղջկա կյանքը: Իսկ ինչո՞ւ է նա գնացել այդ քայլին. ըստ նախնական տեղեկությունների՝ ընկերոջ հետ վիճաբանությունից հետո է փորձել վերջ տալ իր կյանքին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՐԵՎՈՐ

19–ԱՄՅԱ ՏՂԱՆ ՄԱՀԱՑԱՎ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 19-ամյա տղա է վերջ տվել կյանքին՝Կիեւյան կամրջից ցած նետվելով:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ երիտասարդ տղան ունեցել է առողջական խնդիրներ:

Նկատենք, որ վերջին շրջանում առողջական խնդիրներ ունեցող անձինք հաճախ են իրավիճակից դրդված ինքնասպանության գնում:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ԿՐԱԿՈՑԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Արարատի մարզում աներոջ տուն զինված մտած փեսան եղել է ատրճանակով եւ խաղալիք նռնակով: Իսկ ինչո՞ւ է նա կրակել աներոջ ուղղությամբ: Նա իրավապահներին ասել է, որ ցանկանում է միանալ կնոջը, ու իրեն խանգարում են ընտանիքի միավորման հարցում:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 14-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 22:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Արարատի մարզային վարչությունում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Վերին Արտաշատ գյուղում քաղաքացին զենքով եւ նռնակով զինված մտել է ինչ-որ տուն եւ սպառնացել է տան անդամներին մորթել. հայտնում է shamshyan.com-ը:

Ոստիկանները պարզել են, որ ժամը 20:30-ի սահմաններում Վերին Արտաշատ գյուղի Իսակովի փողոցի տներից մեկն է այցելել նույն գյուղի բնակիչ, 28-ամյա Գոռ Ա.-ն, որը ցանկացել է իր նախկին կնոջը տուն տանել: Ըստ 41-ամյա տանտիրոջ՝ Վարդուհի Հ.-ի հայտարարության՝ նախկին ամուսինը հայտնել է, որ ինքը պետք է կնոջը տանի, այլապես բոլորին կսպանի, եւ նրա ձեռքին եղել է ատրճանակ եւ ինչ-որ առարկա, որ նա նմանեցրել է նռնակի:

ԽՈՒՍԱՓԵԼ Է ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ռոման Ուսոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հաշվառված լինելով ՀՀ ՊՆ եւ ՋՀԾ Երեւանի թիվ 3 տարածքային ստորաբաժանումում, ենթակա է եղել զորակոչման 2022թ. ձմեռային զորակոչին:

Մինչեւ զորակոչի ավարտը չի ներկայացել տարածքային ստորաբաժանում եւ խախտելով «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝ խուսափել հայտարարված պարտադիր զինվորական ծառայության՝ 2022 թվականի ձմեռային զորակոչից այդ զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից ազատվելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայության դեպքում:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈՐԾ Է ՀԱԲՈՒՑՎԵԼ

Արցախի Հանրապետության անվտանգության խորհրդի նախկին քարտուղար Սամվել Բաբայանի հնչեցրած հայտարարությունների ու հաղորդման հիման վրա՝ քրեական գործ է հարուցվել. այս մասին հայտնում են ՀՀ գլխավոր դատախազությունից: Վարույթը նախաձեռնվել է երկու հոդվածներով՝ Քրեական օրենսգրքի 550 հոդվածով՝«Զինվորական պաշտոնեական անփութությունը», որը սահմանում է ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում հրամանատարի կամ պաշտոնատար անձի կողմից իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ կամ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, ինչպես նաեւ Քրեական օրենսգրքի 550 հոդվածով՝ «Մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը», որը սահմանում է առանց մարտի հանգամանքներով հարկադրված լինելու հրամանատարի (պետի) կողմից ամրությունը, մարտական տեխնիկան կամ մարտ վարելու այլ միջոցը հակառակորդին հանձնելը կամ թողնելը: Դատախազությունից փոխանցեցին, որ գործով մեղադրյալներ այս պահի դրությամբ չկան:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հոկտեմբերի 13-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 121 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔԻ ՈՂԵՐՆ ՕՏԱՐԵԼ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. փետրվարի 26-ին Դիլիջան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված, Դիլիջանի քոլեջի շրջանավարտ,անձնական գործում իր սեռը «արու» գրած՝ ՔՊ կուսակցության Դիլիջանի կազմակերպության ղեկավար Դավիթ Սարգսյանը շարունակում է Դիլիջան համայնքի հողերը օտարել Երեւան քաղաքի բնակիչներին: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում նշված է, որ Դիլիջան համայնքի ղեկավարի 2023թ. սեպտեմբերի 4-ի թիվ 715-Ա որոշմամբ՝ 2023թ. հոկտեմբերի 5-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 1790.7քմ հողամաս (Լոտ-42 (ՔՀ-23)) Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 34 հասցեում բնակելի կառուցապատման նպատակով, 12534900 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 21936075 դրամ առավելագույն գնով հաղթել է Երեւան քաղաքի Կ. Ուլնեցու փողոցի թիվ 37/1 տան բնակիչ Զարմինե Քեշիշյանը. այդ մասին Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 5 արձանագրությունը: Համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը որոշել է նշված հողամասը կառուցապատման նպատակով տրամադրել Զարմինե Քեշիշյանին: Դիլիջանի համայնքի ղեկավարի 2023թ. սեպտեմբերի 4-ի թիվ 715-Ա որոշմամբ՝2023թ. հոկտեմբերի 5-ին աճուրդի է ներկայացվել Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 13442.6քմ հողամաս (Լոտ-39 (ՔՀ-23)) Դիլիջան համայնքի Գոշ գյուղի Մ. Գոշի փողոց 1-ին նրբ. թիվ 11/6 հասցեում հանգստի նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, 8065560 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 8065560 դրամ առավելագույն գնով հաղթել է Երեւան քաղաքի Բյուզանդի փողոցի 7-րդ շենքի թիվ 58 բնակարանի բնակիչ Վարուժան Բաբախանյանը, որի մասին Դիլիջան համայնքի հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 2 արձանագրությունը: Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հոկտեմբերի 10-իմ որոշում է ընդունել Վարուժ Բաբախանյանին աճուրդային կարգով նշված հողամասը օտարելու մասին: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում բազում տեղեկություններ կան ՔՊ-ական համայնքապետի կողմից համայնքի հողերը Երեւանի բնակիչներին օտարելու մասին: Դիլիջան համայնքի բնակիչները հայտնում են, որ բազմաթիվ անգամ տնամերձ հողամաս կամ կառուցապատման համար հողատարածք գնելու, աճուրդային կարգով ձեռք բերելու նպատակով դիմել են Դիլիջանի համայնքապետարան, սակայն նրանց պատասխանել են, որ Դիլիջան քաղաքում ազատ, օտարելու հողամասեր չկան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Էկոնոմիկայի նախարարությունում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված գյուղատնտեսության ոլորտի գործարարների, ֆերմերների հետ հանդիպմանը վերհանվել են խնդիրները, դրանց հիման վրա՝ պետությունը կվերանայի պետական աջակցության ծրագրերը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ասացին էկոնոմիկայի նախարարության պաշտոնյաները «Հումանիտար կենտրոն»-ում կայացած ասուլիսին:

«Ներկայացվեցին ոլորտային քաղաքականությունը, ինչպես նաեւ բոլորը հարցերը, որոնք կարող են առնչվել եւ հնարավորություններին, եւ մարտահրավերներին: Ներկայացվեցին նաեւ կառավարության կողմից առաջարկվող եւ գործող ծրագրերը գյուղատնտեսության զարգացման նպատակով, ինչպես նաեւ քննարկվեցին ֆերմերներին, գործարարներին հետաքրքրող, կարիքները վերհանելու նպատակ ունեցող հարցեր»,-ասաց փոխնախարար Արման Խոջոյանը:

Հանդիպմանը մասնակցել են նաեւ հայաստանյան գործարարներ, որոնք առաջարկներ են հնչեցրել հանդիպմանը մասնակից ֆերմերներին, տնտեսավարողներին: Մասնակիցները նաեւ կարեւորել են վերապատրաստումները: Նախարարության հիմնական նպատակն է եղել հանդիպման արդյունքում գնահատել կարիքները, քանի որ կառավարության կողմից առաջարկվող ծրագրերը հիմնականում թիրախավորված են եւ հիմնված են շահառուների կարիքների վրա:

Փոխնախարար Աշխեն Շիրվանյանն ասաց, որ արդյունավետ քննարկման արդյունքում վերհանվել են բոլոր խնդիրները: «Այդ խնդիրների հիման վրա՝ մենք նախատեսում ենք վերանայել ծրագրերը եւ անհրաժեշտ փոփոխություններ կատարել, մասնավորապես՝ սահմանել այնպիսի պայմաններ, որոնց միջոցով հնարավորություն կընձեռենք ԼՂ-ից տեղահանված մեր հայրենակիցներին օգտվելու գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերից»,-ասաց նա:

Ծրագրերը, նրա վստահեցմամբ, շատ են: Շիրվանյանը հուսով է, որ հայրենակիցները մեծ հետաքրքրություն կցուցաբերեն գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերի նկատմամբ:

Խոջոյանը, դիմելով Հայաստանում գործող կազմակերպություններին, ասաց, որ նախարարությունը պատրաստ է կամուրջ հանդիսանալ, համակարգել, եթե նրանք ԼՂ-ից բռնի տեղահանվածների հետ համագործակցության հնարավորություն տեսնեն:

Հանդիպումը կայացել է հոկտեմբերի 12-ին:

Նշենք նաեւ, որ ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանը «Հումանիտար կենտրոն»-ում մամուլի ասուլիսի ժամանակ հավելեց, որ Հայաստանի հիվանդանոցներում բուժում է շարունակում ստանալ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված 198 բուժառու:

«198-ից 44-ի վիճակը ծանր է, 10-ինը շարունակում է մնալ ծայրահեղ ծանր»,-ասաց Բաղդասարյանը: Եվս 19 բուժառու բուժումը շարունակում է արտասահմանյան կլինիկաներում:

Ամբուլատորիաներ արդեն կցագրվել է 28 հազար 861 անձ: Ջուգահեռ Առողջապահության նախարարությունը մոբիլ թիմերի միջոցով իրականացնում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց բուժզննում. այսպիսի բուժզննում է անցել արդեն 604 անձ:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԳԱԶԱՅՈՒՄ

Մերձավոր Արեւելքում իրավիճակը կտրուկ վատթարացավ հոկտեմբերի 7-ին՝ Գազայի հատվածից Իսրայել «ՀԱՄԱՍ»-ի զինյալների ներթափանցումից հետո: Արմատականներն այս հարձակումը համարում են պատասխան Երուսաղեմի Ալ-Աքսա մզկիթի դեմ Իսրայելի իշխանությունների գործողություններին: Իսրայելը հայտարարեց Գազայի հատվածի ամբողջական շրջափակման մասին եւ սկսեց հարվածներ հասցնել դրան եւ Լիբանանի ու Սիրիայի որոշ տարածքների վրա: Բախումներ են տեղի ունենում նաեւ արեւմտյան ափին: Ավելի քան 2,8 հազար պաղեստինցի է զոհվել, մոտ 10,9 հազարը վիրավորվել է, իսրայելական կողմից հակամարտության զոհ է դարձել մինչեւ 1,5 հազար մարդ, գրեթե 4 հազարը վիրավորվել է: Գազայի հատվածում գտնվող բժշկական հաստատությունները չեն կարողանում դիմակայել իսրայելական հրթիռակոծությունից տուժածների հոսքին: Այս մասին Al Jazeera հեռուստաալիքին տված մեկնաբանությունում ասել է անկլավի ներքին գործերի նախարարության ներկայացուցիչ Իյադ ալ Բուզմը: «Հազարավոր վիրավորներ գտնվում են մահվան վտանգի տակ, քանի որ հիվանդանոցները չեն կարողանում սպասարկել նման քանակի տուժածների»,- ընդգծեց նա՝ հավելելով, որ հարյուրավոր դիեր դեռ մնում են փլատակների տակ եւ չեն տեղափոխվում: Ալ-Բուզմը կոչ է արել միջազգային հանրությանը միջոցներ ձեռնարկել Իսրայելի ագրեսիան դադարեցնելու եւ Գազա բժշկական պարագաներ, ջուր եւ վառելիք մատակարարելու համար: Նա անկլավում ստեղծված իրավիճակը անվանել է «աղետալի»:

ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ ԲԱՑ ԿԼԻՆԻ

Քննարկման մտած օրենքի նախագիծը, ըստ ՊԵԿ-ի, բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունները հարկային մարմնին կարող են տրամադրվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկային մարմինը նույնպես հանդիսանում է գաղտնիք տնօրինող պետական մարմին: Ներկա օրենսդրական կարգավորումներով՝ բանկն իր հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հարկային մարմնին տրամադրում է՝ միայն դատարանի որոշման հիման վրա:

Իրավաբան Մուշեղ Խաչիկյանը կարծում է, որ օրենքի ընդունման պարագայում բազում խնդիրներ կլինեն, դրանց թվում՝ այս օրենքի պատճառով Հայաստանը կարող է բաց թողնել արտասահմանյան որոշ խոշոր ներդրողների: Այս օրենքի ընդունումը, ըստ գործարարների, խանգարելու է նաեւ իրենց աշխատանքի բնականոն ընթացքին:

Փաստաբան Արսեն Սարդարյանն էլ նշում է, որ եթե օրենքն ընդունվի, օրենքին դեմ անձինք այն կբողոքարկեն Վարչական դատարանում, ապա՝ Սահմանադրական դատարան, եւ, ըստ անհրաժեշտության, կդիմեն եւ այն կբողոքարկեն նաեւ Եվրոպական դատարանում:

Այս հայեցակարգի կոնցեպտը կայանում է նրանում, որ սա իրավական կարգավորումների սկզբունքային փոփոխության է բերում, եւ դատական վերահսկողության մեխանիզմը բանկային գաղտնիքի սահմանափակման գործում գրեթե վերանում է: ՊԵԿ-ը կարող է ամեն նախորդող տարվա հաշվետվությունը պահանջել Կենտրոնական բանկից դատարան դիմելուց հետո: Ըստ այս օրենքի նախագծի՝ գործարարների բանկային շարժը յուրաքանչյուր տարվա ավարտին պարտադիր կերպով Կենտրոնական բանկի միջոցով մտնելու է ՊԵԿ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է ճՏ 33 պատահար. 6 մարդ զոհվել է, 52-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՎԵՐԱՀՄԿՎԵՆ

ՀՀ կենտրոնական բանկը պետք է վերահսկի անշարժ գույքի նվիրաբերությունները: Այս մասին Ազգային ժողովում ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի խորհրդարանական մշտական հանձնաժողովի նիստին՝ ««Փողերի լվացման դեմ պայքարի եւ ահաբեկչության ֆինանսավորման մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրինագծի երկրորդ եւ վերջնական ընթերցման ժամանակ՝ հոկտեմբերի 16-ին, ասել է արդարադատության փոխնախարար Արա Մկրտչյանը:

Փոփոխությունները ենթադրում են, որ ԿԲ կուղարկվեն տվյալներ անշարժ գույքի նվիրաբերման բոլոր գործարքների մասին:

Դա, նախաձեռնության հեղինակների կարծիքով, թույլ կտա մշտադիտարկել այն ռիսկերը, որոնք կապված են փողերի լվացման եւ անօրինաբար ձեռք բերված գույքի լեգալացման հետ:

ԽՍՏԱՑՆՈՒՄ ԵՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Օտարերկրյա օնլայն-խաղատները եւ բուքմեյքերական գրասենյակները, որոնք տոկոսադրույքներ են ընդունում Հայաստանից, պետք է լիցենզավորվեն այն պայմաններով, ինչ եւ տեղի ընկերությունները: Այս մասին Ազգային ժողովում ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական խորհրդարանական հանձնաժողովի նիստին՝ ««Մոլախաղերի, ինտերնետ տոտալիզատորների եւ խաղատների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրինագծի երկրորդ եւ վերջնական ընթերցման ժամանակ՝ հոկտեմբերի 16-ին, ասել է հանձնաժողովի նախագահ եւ օրենսդրական նախաձեռնության համահեղինակ Գեւորգ Պապոյանը:

Օրինագծի համաձայն՝ օնլայն խաղատներում դրույք կատարող անձինք պետք է հատուկ հաշիվներ բացեն: Այդ հաշիվները կարելի կլինի լրացնել միայն ինքնուրույն: Այսպիսով, ինչպես կարծում են օրենսդրական նախաձեռնության հեղինակները, եթե առաջ մոլախաղերի սիրահարների շրջանակը մինչեւ վերջ հստակ չէր մնում, ապա այժմ իրավիճակն արմատապես կփոխվի:

«Կարելի կլինի պարզել, թե արդյոք խաղադրույքներ չեն անում բնակչության անապահով շերտերը, որոնք, օրինակ, ընտանեկան նպաստներ են ստանում»,- ասել է Պապոյանը:

Նույնը վերաբերում է ուժայիններին, ինչպես նաեւ քաղաքացիների այլ խմբերի: Իշխանությունները ցանկանում են թիրախային սահմանափակումներ մտցնել: Իշխանությունների հավաստիացմամբ՝ մոլախաղերի բիզնեսով զբաղվող ընկերությունները փոփոխություններին դեմ չեն: Նրանք պահանջում են հավասար մրցակցություն պահպանել:

Նշենք, որ 2022թ. խաղադրույքների ծավալը Հայաստանում ավելացել է մեկուկես անգամ՝ 3,9-ից մինչեւ 5,8 տրրլն դրամ ($12,5 մլրդ): Կառավարությունում կարծում են, որ խաղադրույքները կարող էին գնալ օտարերկրյա կայքեր:

Բավական երկարատեւ քննարկումներից հետո օրենսդրական նախաձեռնությունն արժանացավ խորհրդարանական մշտական հանձնաժողովի դրական եզրակացությանը:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» Գ

ԱՃՈՒՐԴ՝ ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

2023թ-ի նոյեմբերի 02-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Թիվ 96 լոտ՝ ոսկյա զարդեր 24.2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 22.3 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 313.000 ՀՀ դրամ: Թիվ 97 լոտ՝ ոսկյա զարդեր 10.6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 10.4 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 146.000 ՀՀ դրամ: Թիվ 98 լոտ՝ ոսկյա զարդեր 3.8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 3.7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 52.000 ՀՀ դրամ: Թիվ 99 լոտ՝ ոսկյա ջարդոն 24 գր. ընդհանուր քաշով, որից 10,5գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 10 գր.) 500 հարգի՝ 118.600 ՀՀ դրամ, 13,5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 13 գր.) 585 հարգի՝ 183.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 301.600 ՀՀ դրամ: Թիվ 100 լոտ՝ ոսկյա զարդեր 17,5 գր. ընդհանուր քաշով, որից 10,4գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը (զուտ քաշը 10 գր.) 500 հարգի՝118.600 ՀՀ դրամ, 7,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 6,5գր.)585 հարգի՝91.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 210.100 ՀՀ դրամ: Թիվ 101 լոտ՝ ոսկյա զարդ 15.5 գր. քաշով 958 հարգի, լոտի մեկնարկային գինը 357.700 ՀՀ դրամ: Թիվ 102 լոտ՝ ոսկյա ջարդոն 14.3 գր. ընդհանուր քաշով, որից 6.5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 6.3 գր.) 585 հարգի՝88.700 ՀՀ դրամ, 7.8 գր. քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝180.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 268.700 ՀՀ դրամ: Թիվ 103 լոտ՝ ոսկյա ջարդոն 10 գր. քաշով 958 հարգի, լոտի մեկնարկային գինը 230.800 ՀՀ դրամ: Թիվ 104 լոտ՝ ոսկյա զարդեր 52.1 գր. ընդհանուր քաշով, որից 43.6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 41 գր.) ոսկյա զարդը 585 հարգի՝ 577.200 ՀՀ դրամ, 5.1գր. քաշով ոսկյա զարդը 958 հարգի՝117.700 ՀՀ դրամ, 3.4 գր. քաշով ոսկյա զարդը 500 հարգի՝40.300 ՀՀ դրամ լոտի մեկնարկային գինը 735.200 ՀՀ դրամ: Թիվ 105 լոտ՝ ոսկյա ջարդոն 24.3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 22 գր.) ոսկյա զարդը 585 հարգի՝ լոտի մեկնարկային գինը 309.700 ՀՀ դրամ: Թիվ 106 լոտ՝ոսկյա զարդ 16.2 գր. ընդհանուր քաշով(զուտ քաշը 16.1 գր.) 585 հարգի՝ լոտի մեկնարկային գինը 226.600 ՀՀ դրամ: Թիվ 107 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն 78.4 գր. ընդհանուր քաշով, որից 21.9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 17.6 գր.) ոսկյա զարդը 585 հարգի՝ 247.800 ՀՀ դրամ, 53,8գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 52.3 գր.) 585 հարգի՝736.300 ՀՀ դրամ, 2.7 գր. քաշով ոսկյա ջարդոնը 585 հարգի՝38.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.022.100 ՀՀ դրամ: Թիվ 108 լոտ՝ոսկյա ջարդոն 4.3 գր. քաշով 500 հարգի՝ լոտի մեկնարկային գինը 51.000 ՀՀ դրամ: Թիվ 109 լոտ՝ ոսկյա զարդեր 28.5 գր. ընդհանուր քաշով, որից 2.8 գր. քաշով (զուտ քաշը 2 գր.) ոսկյա զարդը 500 հարգի՝23.700 ՀՀ դրամ, 24.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 24 գր.) ոսկյա զարդերը 585 հարգի՝ 337.900 ՀՀ դրամ, 1.3 գր. քաշով զարդը 750 հարգի՝23.400 ՀՀ դրամ՝ լոտի մեկնարկային գինը 385.000 ՀՀ դրամ: Թիվ 110 լոտ՝ոսկյա զարդ 4.8 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 67.500 ՀՀ դրամ: Թիվ 111 լոտ՝ ոսկյա զարդ 8,1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 7,5 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 105.600 ՀՀ դրամ: Թիվ 112 լոտ՝ ոսկյա զարդ 5,8 գր. քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 81.600 ՀՀ դրամ: Թիվ 113 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 11,1գր. ընդհանուր քաշով, որից 10գր. քաշով ոսկյա զարդը 585 հարգի՝140.800 ՀՀ դրամ, 1,1 գր. քաշով ոսկյա ջարդոնը 585 հարգի՝ 15,400 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 156.200 ՀՀ դրամ: Թիվ 114 լոտ՝ ոսկյա զարդեր 30.4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 29,4 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 413.900 ՀՀ դրամ: Թիվ 115 լոտ՝ոսկյա ջարդոն 3,8 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 3,3 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 46.400 ՀՀ դրամ: Թիվ 116 լոտ՝ոսկյա զարդեր 137,9 գր. ընդհանուր քաշով, որից 7,1գր. քաշով ոսկյա զարդը 958 հարգի՝ 163.800 ՀՀ դրամ, 13,7գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 13 գր.) 500 հարգի՝154.200 ՀՀ դրամ, 117,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 115 գր.) 585 հարգի՝ 1.619.200 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.937.200 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/. հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ: Լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00-ն, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝ դիմումի հիման վրա:

Հեռ. 043 00-42-27:

ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ Գ

Աճուրդի առաջին փուլը կայանալու է 02 նոյեմբերի 2023 թվականին, ժամը 12:00-ին, ՀՀ, քաղաք Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում, այնուհետեւ, կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝01.07.2024թ.-ին:

Աճուրդի կազմակերպիչն է «Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ), որն իրականացնելու է հետեւյալ լոտի (այսուհետ՝Լոտ) բաց աճուրդ «հոլանդական» եղանակով:

Աճուրդի պայմաններն են.

ԼոտՀՀ, Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք., Մ. Մկրտչյան փողոց, 31 հասցեում գտնվող 493,19 քմ բնակելի տուն, 2,99 քմ /8,55 խմ/ պարիսպ, 1,38 քմ /2,48 խմ/ պարիսպ, 3,87 քմ /6,19 խմ/ պարիսպ, 48,39 քմ հարթակ եւ 0,04475 հա հողամաս,

Լոտի մեկնարկային գինը՝ 127890000 (մեկ հարյուր քսանյոթ միլիոն ութ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ,

Միջնորդավճար՝ Լոտի ձեռքբերման գնի 1 տոկոսի չափով (այսուհետ՝ Միջնորդավճար),

Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետեւալ փաստաթղթերը.

ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ մասնակցի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իրավաբանական անձի դեպքում՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի եւ կամ ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը եւ լիազորությունները հաստատող փաստաթուղթը, մասնակցի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով աճուրդավարի մուրճիկի 3 (երեք) հարվածից առաջ առաջարկել է ամենաբարձր գինը: Աճուրդում հաղթող ճանաչված մասնակիցը Լոտի գինը եւ Միջնորդավճարը վճարում է աճուրդի կայացման օրվան հաջորդող 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում՝ հաշվանցելով մուծված նախավճարի գումարը: Սահմանված ժամկետում գնորդի կողմից վճարումներ չկատարելու դեպքում Կազմակերպիչը կարող է աճուրդի արդյունքները համարել չեղյալ: Կարող են սահմանվել Լոտի գնի վճարման այլ ժամկետներ եւ չափաբաժիններ՝ վաճառողի եւ գնորդի կողմից համապատասխան փոխհամաձայնությամբ:

Աճուրդի մասնակցության նախավճարը կազմում է Լոտի ընթացիկ մեկնարկային գնի 1 (մեկ) տոկոսը, որի վճարման վերջնաժամկետը յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն է: Նախավճարը վճարվում է անկանխիկ՝ հետեւյալ հաշվեհամարին՝ 2470103374150000, կամ Կազմակերպչի կողմից տրամադրված այլ հաշվեհամարին, իսկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում այն կարող է նաեւ վճարվել կանխիկ եղանակով աճուրդի կայացման հասցեում՝ Կազմակերպչի դրամարկղ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում:

Լոտին կարող եք ծանոթանալ սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի բացմանը նախորդող օրը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10:00-ից մինչեւ 18:00-ն՝ զանգահարելով ստորեւ նշված հեռախոսահամարին եւ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու եւ վերջինիս պատճենն անվճար ստանալու համար դիմել Կազմակերպչին՝ ստորեւ նշված հասցե:

Կազմակերպիչը կարող է կատարել սույն ծանուցման փոփոխություններ եւ լրացումներ, որոնք կարող են իրականացվել այնպես, ինչպես կատարվել է աճուրդի մասին հրապարակային ծանուցումը: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել ստորեւ նշված հեռախոսահամարին կամ այցելել ստորեւ նշված կայքերը:

էլ. փոստ՝ llcbst@yahoo.com

հասցե՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31

հեռ.՝ +374 11 56 45 13

կայք՝ www.llcbst.am, www.borsa.am

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐ

ԱՆԻ ԵՐԱՆՅԱՆԸ՝ ՆՈՐ ԿԵՐՊԱՐԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հոկտեմբերի 30-ից 16 մասից բաղկացած «Մալենա» ֆիլմը կհայտնվի եթերում: Ֆիլմի պրոդյուսերը Սոս Կարապետյանն է, տնօրենը՝ Անի Երանյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ֆիլմի տնօրեն եւ գլխավոր դերակատար Անի Երանյանը պատմել է մանրամասներ ֆիլմի նկարահանումներից ու ստեղծագործական փուլից. «Այս ֆիլմը ինձ համար շատ կարեւոր է, որովհետեւ ես եւ Սոս Կարապետյանն ենք եկել այս գաղափարին եւ քարը քարի վրա դնելով, փայփայելով, կռվելով, շատ ու շատ դժվարությունների միջով անցնելով՝ ստացանք շատ լավ ու հետաքրքիր արդյունք, որը շուտով կհանձնենք մեր հեռուստադիտողի դատին: Իհարկե, այս ամենն անհնար կլիներ իրականացնել առանց այն մեծ խմբի, պրոֆեսիոնալ մարդկանց, որոնք աշխատեցին մեզ հետ այս ֆիլմի շրջանակներում:

Ամերիկայի հայկական հեռուստատեսության համար շատ արտասովոր է նման մեծ թիմ ունենալ, համարյա թե անհնար, բայց ես երբեւէ չէի ստորագրի մի բանի տակ, որ լավ կլինի առանց պրոֆեսիոնալ մասնագետների:

«Գործարք Վեգասում» ֆիլմի արձագանքներից հետո Սոսն առաջարկեց նույն դերասանական կազմով մի բան անել եւ ինձ առաջարկեց միասին անել ֆիլմ: Ես վստահ եմ, որ այս համագործակցությունը շատ հետաքրքիր արդյունք է տալու, ու ես մեծ հույս ունեմ, որ այն ահռելի եւ մասշտաբային աշխատանքը, որն արվել է, կգնահատի մեր հեռուստադիտողը»:

Անիի խոսքով՝ դժվարություններ շատշատ են եղել, բայց ամեն դժվարության ժամանակ ավելի վստահ է եղել, որ արդյունքը լինելու է ավելի լավը:

«Ստեղծագործական խմբից համարյա թե ոչ մեկի հետ չէինք աշխատել: Անսահման ուրախ եմ սցենարիստ Անի Մաղաքյանի հետ համագործակցության համար, որ վստահեց, եւ փոխադարձ վստահության եւ առողջ աշխատանքի շնորհով ստացանք նոր, հետաքրքիր նախագիծ: Մեր թիմի բոլոր անդամներին անհատապես շնորհակալ եմ առանց տրտնջալու եւ բոլոր խոչընդոտները մեզ հետ հաղթահարելու համար»:

Դերասաններ Պապ Պողոսյանի, Տիգրան Մանսուրյանի, Գեւորգ Կալեմդարյանի հետ առաջին անգամ է աշխատում Անին եւ «Ժողովուրդ» օրաթերթին վստահեցնում է, որ բոլոր դերասանները այնքան լուրջ, պրոֆեսիոնալ եւ պատրաստված էին գալիս նկարահանման հրապարակ, որ ուղղակի հաճելի էր նրանց հետ աշխատել:

Խոսելով իր իսկ մարմնավորած կերպարի՝ Մալենայի մասին՝ Երանյանը համեմատում է՝ խառնվածքով նման է Մալենան Անիին, բայց միեւնույն ժամանակ ընդհանրապես Անիի հետ կապ չունեցող մարդ է.

«Երկկողմանի ծնողազուրկ մարդը՝ վրեժխնդրությամբ լցված, ինչպիսին կարող է լինել, ես չգիտեմ, բայց Անին մաքսիմում արդարացրել է իր մեջ Մալենային եւ իրենից տվել մի քիչ սեր ու քնքշանք... Ազնվություն նա ուներ, մի քիչ էլ ես ավելացրի: Շատ չեմ ուզում կերպարը բացահայտել, որպեսզի լինի ավելի հետաքրքիր, եւ ամեն մեկը նայելիս ինքը որոշի՝ ինչպիսին է Մալենան»,- պատմում է Անին:

Որպես ֆիլմի տնօրեն՝ Անի Երանյանը, խոսելով ակնկալիքների մասին, կարծում է, որ յուրաքանչյուր գործ անելուց յուրաքանչյուր մարդ, որն իր գործը սիրող մարդ է, ուզում է, որ այն լինի նախորդից լավը:

«Ես կարծում եմ եւ մեծ հույս ունեմ, որ մեր սիրելի հեռուստադիտողը կգնահատի եւ կսիրի մեր աշխատանքը:

Ինչը կապված է թիմին, չգիտեմ՝ հետագայում կհամագործակցենք, թե ոչ, բայց համոզված եմ, որ այս համագործակցությունը մեր թիմից շատերի համար կլինի այցետոմս նոր դռներ բացելու համար»:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԵՏԱՔՐՔԻՐ

ԳԵՎՈՐԳ ՄԿՐՏՉՅԱՆԸ՝ ԱՄՆ-ՈՒՄ

Երգիչ Գեւորգ Մկրտչյանն ԱՄՆ-ում է: Նրան սիրելին՝ Քրիստինան է ճանապարհել օդանավակայանից:

«Միշտ գալիս էի, մարդ էի ճանապարհում Ամերիկա, ու հիմա եկել է էն պահը, որ ես եմ գալիս»,- ասել է Գեւորգը:

Քրիստինան էլ հավելել է, որ այժմ ինքն է հայտնվել ճանապարհողի դերում:

Գեւորգը Միացյալ Նահանգներում հանդիպել է Անուշ Մարտիրոսյանի եւ նրա ընտանիքի հետ:

«Բարի գալուստ, իմ պուճուր ախպեր»,- գրել է Անուշ Պետրոսյանը՝ հրապարակելով իր եւ Գեւորգ Մկրտչյանի համատեղ լուսանկարը:

Ավելի ուշ Գեւորգը ինստագրամյան իր էջում հրապարակել է լուսանկար Բեն Ավետիսյանի դստեր հետ:

Հավելենք, որ Գեւորգը ԱՄՆ է գնացել 20 օրով:

ՎԵՐԱԴԱՐՁ՝ «ԱԿՈՒՆՔՆԵՐԻՆ»

Ալեն Սիմոնյանը վերադարձել է «ակունքներին»: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետն ավարտած մերօրյա ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ժամանակին՝դեռեւս 1995-1996 թվականներից, խաղալով Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ՈՒՀԱ թիմում, դարձել էր Հայաստանի լիգայի չեմպիոն: Ավելի ուշ՝ 2004-2008 թվականներին, նկարահանվել է «Փախուստ բանտից», «Հիպոկրատի երդվյալները» հեռուստասերիալներում, մասնակցել է տարբեր հեռուստանախագծերի որպես դերասան, պրոդյուսեր, նախագծի տնօրեն: Ալեն Սիմոնյանը նաեւ «Ալաբալանիցա» ֆիլմի գծային պրոդյուսերն ու «Նո Քոմմենթ» ներկայացման տնօրենն է եղել:

Սիմոնյանին ավելի հոգեհարազատ էր կարծես քաղաքական կյանքը: Ընդդիմադիր հայացքներ ունեցող Սիմոնյանը 2018 թվականից, արդեն դառնալով իշխանական թեւի ներկայացուցիչ, դադարեցրեց իր ստեղծագործական գործունեությունը դերասանական ասպարեզում:

Տեւական դադարից հետո Ալեն Սիմոնյանը ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում կիսվել է «Սեւազգեստ կանայք» ֆիլմի գովազդային պաստառով՝ կից գրելով. «Հայկական արտադրության լավագույն ֆիլմերից մեկը»: Նա նշել է ֆիլմի պրոդյուսեր Գոռ Կիրակոսյանի էջը:

Մ. ՂԱՋԱՐՅԱՆ

ՍՊՈՐՏ

ՄԱՆԱՍՅԱՆԸ՝ ՈՍԿԵ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Հայաստանի բռնցքամարտի հավաքականի անդամ Նարեկ Մանասյանը դարձավ Եվրոպայի գավաթի անդրանիկ խաղարկության ոսկե մեդալակիր:

Չեռնոգորիայի Բուդվա քաղաքում ընթացող գավաթի խաղարկության 92 կգ քաշային կարգի եզրափակչում Մանասյանի մրցակիցը Իտալիայից Ազիզ Աբբես Մուհիդինն էր: Իտալացի բռնցքամարտիկը վնասվածքի պատճառով չներկայացավ մենամարտին, ու հաղթանակը շնորհվեց հայ մարզիկին:

Ավելի վաղ Հայաստանի հավաքականից Ռուդոլֆ Գաբրոյանը դարձել է Եվրոպայի գավաթի արծաթե մեդալակիր, իսկ Ռաֆայել Հովհաննիսյանը, Ռուսլան Ասլիկյանը եւ Բարեղամ Հարությունյանը՝ բրոնզե մեդալակիրներ:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿԵՐԿԱՐԱՁԳԻ

Իտալական «Ինտեր»-ը մտադիր է երկարաձգել պայմանագիրը Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանի հետ:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ այս մասին գրում են իտալական ԶԼՄ-ները: Միլանի «Ինտեր»-ը ցանկություն ունի Մխիթարյանին եւս մեկ տարվա պայմանագիր առաջարկել: Ներկայիս պայմանագիրը հայ կիսապաշտպանի հետ նախատեսված է մինչեւ 2024 թվականը: Նոր պայմանագիրը կլինի մինչեւ 2025 թվականը: Մխիթարյանը տարեկան կստանա 3,8 միլիոն եվրո աշխատավարձ:

«ՈՍԿԵ ԳՆԴԱԿ» ԿՍՏԱՆԱ

Աշխարհի չեմպիոն Արգենտինայի հավաքականի ավագ, ամերիկյան «Ինտեր Մայամիի» հարձակվող Լիոնել Մեսիին նախապես հայտնել են, որ ստանալու է «Ոսկե գնդակ» մրցանակը 2022/2023 մրցաշրջանի արդյունքներով. հաղորդում է BOLASPORT-ը՝ հաղում անելով Մեսիի մտերիմ ընկեր Ալեսանդրո Դոսետիին: 36-ամյա ֆուտբոլիստին ուրախալի լուրը հայտնել են հոկտեմբերի 13-ին: Այժմ Մեսին սպասում է մրցանակաբաշխության պաշտոնական արարողությանը: Հիշեցնենք, որ Լիոնել Մեսին «Ոսկե գնդակի» 7-ակի դափնեկիր է եւ պատվավոր մրցանակին արժանացել է 2009, 2010, 2011, 2012, 2015, 2019, 2021 թվականներին: Նախորդ մրցաշրջանում արգենտինացին ակումբային կարիերայում անցկացրել է 53 հանդիպում, դարձել 32 գոլի ու 25 գոլային փոխանցման հեղինակ: Նա այս ամռանն է ֆրանսիական ՊՍԺ-ից տեղափոխվել «Ինտեր Մայամի»:

● *Հոկտեմբերի 18-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Իմ կնոջ անունն է Մորիս» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ կատարել իմ կենսաթոշակի վերահաշվարկ. խնդրում եմ ասել՝ դրա համար ինչ է անհրաժեշտ: Ո՞ր դեպքում է կենսաթոշակը վերահաշվարկվում:

Լյուդմիլա Ներսիսյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ աշխատանքային կենսաթոշակը վերահաշվարկվում է, եթե՝

1) փոխվել է հիմնական կենսաթոշակի չափը կամ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը տվյալ ամսվա 1-ից,

2) տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց (կենսաթոշակը կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց) 12 ամիս հետո կենսաթոշակառուն ներկայացրել է կենսաթոշակը նշանակելուց (կենսաթոշակը կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց) հետո առնվազն վեց ամիս աշխատած լինելու մասին տեղեկանք դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից,

3) կենսաթոշակառուն ներկայացրել է մինչեւ կենսաթոշակ նշանակելը (կենսաթոշակի տեսակը փոխելը) ընկած ժամանակահատվածում իր կամ մահացած կերակրողի աշխատանքային կամ մինչեւ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքն ընկած ժամանակահատվածի այլ գործունեության վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից,

4) հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուն մինչեւ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալը՝ կենսաթոշակը նշանակելուց 2 ամիս հետո, ներկայացրել է այլ գործունեության ժամանակահատվածի մասին փաստաթուղթ դիմումը եւ այդ փաստաթուղթը ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ կնսաթոշակը վերահաշվարկվում է նաեւ՝

1) հաշմանդամության խումբը փոխվելու դեպքում նոր հաշմանդամության խումբ սահմանելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից,

2) կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող երեխայի կամ առկա ուսուցմամբ սովորող զավակի մյուս ծնողի մահանալու դեպքում՝ նրա մահվան օրվանից, եթե դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվել են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ փոխել սոցիալական փաթեթի իմ հաշիվը: Խնդրում եմ ներկայացնել մանրամասն:

Լիաննա Ցոլակյան (41 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Տեղեկացնում ենք, որ յուրաքանչյուր բյուջետային տարվա սոցիալական փաթեթի գումարների փոխանցման համար լրացվում է նոր դիմում: Սոցփաթեթի հաշիվը կարելի է փոխել միայն նոր բյուջետային տարում՝ նախքան սոցիալական փաթեթի ընթացիկ տարվա առաջին գումարի փոխանցումը: Այս դեպքում աշխատողը դիմումի հետ միասին ներկայացնում է նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք, ինչպես նաեւ սոցփաթեթի նախկին հաշիվը սպասարկող բանկից տեղեկանք՝ պարտավորություններ չունենալու վերաբերյալ: Սոցփաթեթի հաշիվը փոխելու դեպքում աշխատողն իր հաշվի դրամական միջոցները սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկից սոցփաթեթի հաշիվը սպասարկող նոր բանկ փոխանցելու համար նախկին բանկ է ներկայացնում նոր բանկի կողմից տրված սոցփաթեթի հաշվի մասին տեղեկանք: Այդ տեղեկանքի հիման վրա՝ սոցփաթեթի հաշիվը սպասարկող նախկին բանկն աշխատողի սոցփաթեթի հաշվում առկա դրամական միջոցները փոխանցում է սոցփաթեթի հաշիվն սպասարկող նոր բանկի սոցփաթեթի հաշվին:

*ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն*

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ սոցիալական փաթեթի հաշվում առկա դրամական միջոցները հնարավոր է կանխիկացնել կամ փոխանցել ցանկացած ուղղություններով միայն աշխատողի կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու եւ սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման ժամանակ (երբ դադարում է նրա՝ սոցիալական փաթեթ ստանալու իրավունքը, եւ նրա սոցփաթեթի հաշվին առնվազն երեք ամիս սոցիալական փաթեթի գումարների փոխանցումներ չեն կատարվել) կամ աշխատողի մահվան դեպքում ժառանգի կողմից սոցփաթեթի հաշվում առկա միջոցներն օրենքին համապատասխան ժառանգաբար նրան անցնելու դեպքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ազգային հավաքականը ժամանեց Հյուսիսային Մակեդոնիայի Ստրումիցա քաղաք: Թիմը կիանգրվանի Sirius Spa and Welness հյուրանոցում:

Հիշեցնենք, որ Հյուսիսային Մակեդոնիա-Հայաստան ընկերական հանդիպումը տեղի կունենա հոկտեմբերի 17-ին՝ ժամը 17:00-ին (Երեւանի ժամանակով):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տարածք	Ջերմաստիճան
Շիրակ	0 + 4 / +12+ 16
Կոտայքի լեռներ	+ 1 + 5 / +13 + 15
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 / +16 + 19
Գեղարքունիք	0 + 4 / +10 + 14
Լոռի	+ 1 + 6 / +15 + 20
Տավուշ	+ 4 + 9 / +16 + 21
Արագածոտնի լեռներ	0 + 4 / +10 + 14
Արագածոտնի նախալեռներ	0 + 4 / + 11 + 15
Արարատ	+ 8 + 11 / +21 + 23
Արմավիր	+ 7 + 10 / +21 + 23
Վայոց ձորի լեռներ	+ 1 + 3 / +11 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 10 / +20 + 24
Սյունիքի հովիտներ	+10 + 13 / +20 + 22
Սյունիքի նախալեռներ	+ 3 + 8 / +14 + 18
ԼՂՀ	+ 9 + 13 / +19 + 23
Երեւան	+ 6 + 9 / +19 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.10.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*